ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 56-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով,<<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22.1 հոդվածով,<<Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596- Ն որոշման Հավելված N1-ի V-րդ գլխի պահանջներով, հիմք ընդունելով <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման,կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>>Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման կարգի V.Հողամասերի օտարումն աճուրդային կարգով գլխի 23-րդ կետի պահանջներով՝
Որոշում եմ.

1.ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս համայնքի վարչական տարածքում՝ 05-033-0228-0015 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի անցկացված աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված Ավետիք Համբարձումի Մովսեսյանին քաղաքաշինական գործունեության իրականացնելու համար տրամադրել նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակա- գծային առաջադրանք)՝հեղուկ գազի լցակայանի կառուցապատման աշխատանքների նախագծային փաստաթղթեր պատվիրելու համար:

2.Հանձնարարել աշխատակազմի առաջատար մասնագետ Մելիք Քարամյանին օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսված ժամկետներում ապահովել

սույն որոշումից բխող պահանջվող փաստաթղթերի տրամադրումը քաղաքացուն և միաժամանակ սահմանված ընթացակարգով հետևել դրանց իրականացման ընթացքին:

3.Պարտավորեցնել համայնքի բնակիչ Ավետիքի Համբարձումի Մովսեսյանին՝կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների պայմանը՝
-համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2404-Ն որոշման 4-րդ կետի<<ա>>ենթակետի՝ապահովվի կողային տեսանելիության պահանջներն,ինչպես նաև մուտքի և ելքի տրանսպորտային մոտեցումները ապահովված լինեն ՀՀՇՆ IV-11.05.02-99 <<Ավտոմոբիլային ճանապարհներ>>շինարարական նորմերի պահանջներին համապատասխան,
-նախքան հողամասի տարածքում շինարարական աշխատանքների սկիզբն,ըստ սահմանված կարգի, կառուցապատման աշխատանքային հատակագծերը ենթակա են համաձայնեցման ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և ՀՀ ոստիկանության<<Ճանապարհային ոստիկանություն>> ծառայության հետ;
Պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերի առկայության դեպքում ներկայացնել դիմում շինարարության թույլտվություն ստանալու համար:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ

Подписано: BAVEYAN SASHA 1902730216

2021 թ.հոկտեմբերի8
գ.Երանոս